ԳՐԱԴԱՐԱԿ

# «ԱՆԱՆՅԱՆ-ՀՈՎՆԱՆՅԱՆՆԵՐԻ ՈՏՆԱՀԵՏՔԵՐՈՎ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

***2015 թվականի մարտի 15-ին, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում, կայացավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր «Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ, ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության պետ Սերգո Երիցյանի «Անանյան-Հովնանյանների ոտնահետքերով» գրքի շնորհանդեսը: «Հայարտուն» կենտրոնի նախաձեռնությամբ, «Վրաստան» թերթի աջակցությամբ եւ գործարար Ռաֆիկ Աղաջանյանի հովանավորությամբ կազմակերպված միջոցառմանը ներկա էին գրքի հեղինակը, հյուրեր, թբիլիսահայ հասարակայնության ներկայացուցիչներ:***

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի օրհնությունից եւ բարեմաղթանքից հետո, «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Չիդիլյանը երախտիքի խոսքեր ուղղեց Սերգո Երիցյանին եւ նրա հետ աշխատող խմբին հայ գործարարների հետքը Վրաստանում վեր հանելու եւ սերունդներին ներկայացնելու ազգանվեր գործի համար:




«Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահը, որ նպատակադրվել էր Ալեքսանդր Մանթաշեւի, Միքայել Արամյանցի, Եսայի Պիտոեւի, Մելիք-Ազարյանցի անունների շարքում հանրաճանաչ դարձնել նաեւ Անանյան-Հովնանյան գերդաստանի անունը, ընթերցողին էր ներկայացրել այս գերդաստանի արժանավոր զավակների գործունեությունն ու բարեգործությունը Վրաստանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում: Սերգո Երիցյանն իր խոսքում գոհունակությամբ նշեց, որ իրեն հաջողվել է ոչ միայն գրել ամբողջական գիրք Անանյան-Հովնանյանների մասին, այլեւ նկարահանել տեսաֆիլմ հայ մարդու տեսակի մասին, որը կառուցող է, արարող եւ մարդասեր:

Անանյանների հետքերով ընթացող բանասեր հետազոտողին ուղեկցող Յուրի Միկիրտումովը անդրադարձ կատարեց Իմերեթիի տարածաշրջանի Սվիրի գյուղի բնակիչների առանձնահատուկ ջերմ վերաբերմունքին` Անանովների հիշատակին: Սվիրիի բնակչության սերունդները 100 տարի անց շարունակում են ընդգծված ջերմությամբ ցույց տալ հայ մարդու գործարարության հետքերը` «Վարցիխե» գինու եւ կոնյակի գործարանը, Անանովների անունով հիշատակվող աղբյուրը, 35 վերստ երկարությամբ ջրմուղը, Աջամեթիկաղնու անտառը, նաեւ արժեւորել աշխատավոր մարդու նկատմամբ գործարարների ցուցաբերած վերաբերմունքն ու հոգատարությունը:

Անանյան-Հովնանյանների մասին պատմող գրքի հրատարակության եւ նրանց կատարած աշխատանքը հասարակությանը հասանելի դարձնելու համար իրենց սրտի խոսքն ասացին բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, պատմաբաններ Ռուբեն Նահատակյանը, Ենոք Թադեւոսյանը եւ Յուրի Մկրտումովը:

Ամփոփելով շնորհանդեսը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը բարձր գնահատեց ազգի նվիրյալ զավակների, մեծ գործիչների գործունեությունը վերհանելու եւ սերունդներին հաղորդելու նպատակով արժանավոր հայորդի Սերգո Երիցյանի եւ մյուսների նվիրական աշխատանքը: Սրբազան հայրը կարեւորեց հայ գործարար-բարերարների ստեղծագործական, կառուցողական, նաեւ բարեգործական գործունեությունը, որ արվում էր այն երկրի բարգավաճման եւ ծաղկման համար, որը նաեւ նրանց երկիրն էր եւ պատմությունը նրանց մասին իրողություն է, որը պետք է անպայման վերհանել ու ցույց տալ սերունդներին:

«Լոռվա ձոր» հայրենակցական միության նախաձեռնությամբ ներկայացվեց նաեւ Սարգիս Դարչինյանի «Թիֆլիս-հայկական ճեպանկարներ» գրքի ռուսերեն թարգմանությունը:

Բազմամարդ դահլիճը մեծ հետաքրքրությամբ դիտեց «Կարծիք» ստեղծագործական խմբի պատրաստած «Անանյան-Հովնանյաններ. մոռացված արահետներով» տեսաֆիլմը:

***ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ***

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՐՑՆՈՒՄ Է ՄԵԿԸ, ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐԻՆ



*Խորագիրը վարում է իրավաբան ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻՆ:*

## ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Որպեսզի դառնաք ժառանգաբար փոխանցված գույքի սեփականատերը, պարտադիր կարգով նոտարից ստանալու եք ժառանգության վկայական:

Ժառանգության վկայականի ստացման համար, պետք է դիմեք Վրաստանի տարածքում գործող ցանկացած նոտարական բյուրոյի, ժառանգատուի (գույքի սեփականատիրոջ) մահվան օրվանից վեց ամսվա ընթացքում եւ ներկայացնեք դիմում ժառանգության վկայականի ստացման վերաբերյալ:

Վեց ամիս անցնելուց հետո` ներկայացված դիմումի հիման վրա ժառանգության վկայականը կարող եք ստանալ միայն ստորեւ ներկայացված պայմանների դեպքում:

* Եթե գրանցված եք նույն բնակտարածքում, որտեղ ապրում էր ժառանգատուն:

* Եթե նոտարին ներկայացրել եք ժառանգատուի բանկային գրքույկը, նրան պատկանող տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիրը, նաեւ` մունիցիպալիտետի կողմից տրված գույքի տնօրինության մասին տեղեկանքը եւ կոմունալ հարկերի վճարման կտրոնը (հարկերը պետք է վճարված լինեն ժառանգատուի սեփականության ներքո գտնվող գույքի հասցեով` նրա մահից հետո վեց ամսվա ընթացքում):

* Եթե ունեք մյուս ժառանգորդների համաձայնությունը, ժառանգության իրավունքի ստացման համար դիմումը ներկայացնելու եք օրենքով սահմանված ժամկետում: Թեպետ մնացած ժառանգորդները իրենք պետք է ունենան վեց ամսվա ժամկետում նոտարին ներկայացված դիմումներ:

Մյուս դեպքերում, եթե վեց ամսվա ընթացքում նոտարին դիմում չի ներկայացվել, պետք է դիմել դատարանին:

Դատարանը կարող է երկարաձգել ժառանգության համար սահմանված ժամկետը, եթե ժամկետի սպառման պատճառները համարի հարգելի:

Ժառանգության վկայականը տրվում է վեց ամիս հետո:

Վեց ամսից շուտ ժառանգության վկայականը կարող եք ստանալ այն դեպքում, եթե նոտարը ունենա տեղեկանք, որ դուք միակ ժառանգորդն եք եւ այլ ժառանգորդներ գոյություն չունեն: Միաժամանակ, դուք կարող եք հրաժարվել ժառանգությունը ստանալուց: Նման դեպքերում, ո՛չ դուք, ո՛չ ձեր ժառանգները հետագայում ժառանգությունը ստանալու դիմում ներկայացնելու իրավունք չեք ունենա:

Ժառանգության վկայականը ստանալուց հետո գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հանրային ռեեստրում ձեր փոխարեն կարող է գրանցել նոտարը: Այդ լրացուցիչ ծառայության համար սակագին չի սահմանված, միայն մուծելու եք հանրային ռեեստրի գրանցման սակագինը:

Ո՞վ կարող է համարվել ժառանգորդ:

**Առաջին հերթին.**

Հանգուցյալի զավակները, որդեգիրները, ամուսինը (կինը), ծնողները, թոռները, նրանց զավակները (եթե թոռը վախճանվել է), որդեգիրներն ու նրանց ազգականները:

**Երկրորդ հերթին.**

Հանգուցյալի քույրերը, եղբայրները, քրոջ-եղբոր զավակները, եթե վերջիններս վախճանված են` նրանց զավակները:

**Երրորդ հերթին.**

Տատն ու պապը, եթե վերջիններս վախճանված են` նրանց ծնողները:

**Չորրորդ հերթին.**

Քեռիներն ու հորեղբայրը, մորաքույրերն ու հորաքույրերը:

**Հինգերորդ հերթին.**

Հորեղբոր, մորաքրոջ եւ հորաքրոջ զավակները, եթե վերջիններս վախճանված են` նրանց զավակները:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ

# ՕՐՈՋԱԼԱՐԸ` ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԴԱՐԲՆՈՑ

***Գարունն ինքնին տոն է, իսկ երբ այն զուգորդվում է հաջողությունների բերկրանքով, կրկնակի տոն է դառնում:***

Իսկ 2015 թվականի գարունը հաճելիորեն շռայլ գտնվեց Նինոծմինդայի շրջանի Օրոջալարի հանրային դպրոցի համար: Կրթօջախի 8-րդ դասարանի աշակերտուհիներ` երեք փխրուն աղջնակներ, ովքեր իրենց հաջողությունների մասին խոսելիս հայացքները խոնարհում, կրկին բարձրացրին հարազատ դպրոցի ու գյուղի պատիվը:

Ասենք, որ առաջին անգամ չէ, որ գյուղի դպրոցի աշակերտները մասնակցում են տարբեր օլիմպիադաների, մարզական ու գեղարվեստական մրցույթների եւ այլ միջոցառումների: Մասնակցել են եւ միշտ էլ հաղթանակի բերկրանքը ճաշակել` ուրախություն պատճառելով նաեւ մանկավարժներին, հարազատներին, ողջ գյուղին ու շրջանին:

Այս անգամ խոսքը աշակերտուհիներ Կարինե Թազայանի, Լարիսա Թթթյանի եւ Աննա Մարաբյանի մասին է: Կարինեն «WITS OLIMPICS» համապետական օլիմպիադայի շրջանակներում` անգլերեն լեզվի իր իմացությամբ լավագույնն է ճանաչվել Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում` զբաղեցնելով առաջին հորիզոնականը եւ պարգեւատրվել առաջին կարգի դիպլոմով: Նույն մրցույթում երրորդ կարգի դիպլոմով պարգեւատրվել է Լարիսա Թթթյանը: Ուրախ ենք, որ անգլերենի երիտասարդ ուսուցչուհի` Վարդուհի Նորսոյանի շնորհակալ աշխատանքը այս անգամ էլ անհետեւանք չմնաց:

Իսկ շրջանային մշակույթի կենտրոնում «Մայրը գարուն է» խորագրով կիրառական արվեստի մրցույթում իր ձեռագործ աշխատանքներով ուշադրության արժանացավ եւ հատուկ գովասանագրով պարգեւատրվեց Աննա Մարաբյանը: Այդ աշխատանքներից մեկը այժմ զարդարում է կրթօջախի ուսուցչանոցը` մեր սրտերը լցնելով ջերմ զգացումով այն մտքից, որ դա մեր սանուհու հմուտ եւ շնորհալի ձեռքերի արգասիքն է:

Վերջին տարիներին, մեր դպրոցը միշտ էլ աչքի է ընկել իր բարձրորակ մանկավարժական կադրերով, որոնցից է վերոնշյալ երեք աղջնակների տարրականի ուսուցչուհի Սվետլանա Թազայանը, ով իր սաներին անմնացորդ նվիրել է իր հոգում պահ տված գեղեցիկի ու իմացության սերմերը, որոնք դարձել են ծիլ, բողբոջ, շիվ եւ ամրապնդվում են կյանքի հարատեւության օրենքներով:

Գարնան հաջորդ հաճելի անակնկալը շաշկու շրջանային մրցաշարում 6-րդ դասարանի աշակերտ Ռաֆիկ Հանեսյանի հաղթանակն էր: Ռաֆիկը հիսուն խաղացողների հետ մրցապայքարում գրավեց առաջին տեղը եւ արժանացավ հատուկ մրցանակի:

Դպրոցի հաղթանակների արշավը պսակեց դպրոցի մինի-ֆուտբոլի պատանիների թիմը, որը «Ջավախքի ձմեռ» մարզական հանդեսում նվաճեց առաջնության գավաթը: Սաներին մաղթում ենք իղձերի ու երազանքների նոր իրականացում` ե՛ւ մտքի, հոգու, ե՛ւ ֆիզիկական կարողության նորանոր հաղթանակներ:

***ՄԱՐԻԱՄ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ***
***ԼՈՒՍԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ***
*Դպրոցի ուսուցչուհիներ*

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

# ԸՆԴՈՒՆՎԵՑ ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻՆ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

***Մարտի 18-ին Վրաստանի խորհրդարանը, առաջին ընթերցմամբ, ընդունեց «Ընդհանուր կրթության մասին» օրենքի ուղղումները, որոնց համաձայն դպրոց կկարողանան հաճախել այն երեխաները, որոնց 6 տարին լրացել է արդեն մինչեւ ուսումնական տարվա սկսվելը կամ լրանում է մինչեւ տարվա վերջը: Օրինագծի օգտին քվեարկել է 62 պատգամավոր, դեմ` 7-ը:***



Արդեն մի քանի տարի է, ինչ շարունակվում են վեճերը, թե ո՞ր տարիքում է նպատակահարմար երեխաներին դպրոց ուղարկելը: Նախորդ իշխանության օրոք կրթության նախարարության ընդունած որոշման համաձայն` 2010 թվականից երեխաներին կարելի էր դպրոց ուղարկել 5 տարեկանից: Ծնողները դրական գնահատեցին այդ նախաձեռնությունը, հաշվի առնելով 2008 թվականից Վրաստանի դպրոցների 12-ամյա կրթական համակարգի անցման հանգամանքը:

2012 թվականին երկրում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո` որոշվեց վերանայել այդ հարցը:

«Օրենքն ընդունվել է առաջին ընթերցմամբ: Հուսով եմ, որ երկրորդ եւ երրորդ լսումները հաջողությամբ կանցնեն, եւ այն երեխաները, որոնց 6 տարին լրանում է դեկտեմբեր ամիսը ներառյալ, կկարողանան սկսել ուսումը եւ տարին չկորցնելով»,- հայտարարեց օրինագծի հեղինակ եւ նախաձեռնող, «Միասնական ազգային շարժում» ընդդիմադիր խմբակցությունից պատգամավոր Կոբա Սուբելիանին:

Փետրվարի սկզբին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը հաղորդել էր, որ նոր ուսումնական տարվանից Վրաստանի դպրոցներում կսկսեն ընդունել 6 տարին լրացած երեխաներին: Համապատասխան որոշումն ընդունվել էր հոգեբանների եւ ծնողների հետ կրթության նախարարության ներկայացուցիչների հանդիպմանը:

Հոգեբանների համոզմամբ` ծնողների այն կարծիքը, թե գրել-կարդալ իմացող երեխան արդեն պատրաստ է դպրոց հաճախելուն, սխալ է: Ուսումնական բեռնվածության ավելանալու համեմատ երեխան ավելի մեծ հոգեբանական ճնշում է զգալու, ինչը հատկապես սուր կդրսեւորվի բարձր դասարաններում:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

² è àÔæ² ä ²ÐàôÂÚàôÜ

## ԻՆՉ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱԼ ՏՆԱՅԻՆ ԴԵՂԱՏՈՒՓՈՒՄ



***Հաճախ են գրում առաջին անհրաժեշտության դեղորայքի մասին, սակայն կոնկրետ չի նշվում, թե որոնք կարելի է համարել առաջին անհրաժեշտության:***

***Ե.Մարփիրոսյան***

***Բաթումի***

Դեղերը տանը պահելիս պետք է ապահովել փաթեթի կամ միջուկի մեջ նշված համապատասխան պայմանները: Պահման համար նախատեսված պայմանների խախտումը հանգեցնում է ներգործության թուլացման: Տնային դեղատուփում պետք է լինեն.

Այն դեղերը, որոնք բժիշկը նշանակել է անհատական մշտական կիրառման համար (օրինակ՝ հիպերտոնիկ հիվանդների համար արյան զարկերակային ճնշումն իջեցնող դեղեր), ակտիվացրած ածուխ կամ մեկ այլ կլանիչ միջոց, տարբեր լայնությունների ստերիլ եւ ոչ ստերիլ վիրակապեր, յոդ, ֆուրացիլինի հաբեր, 3 տոկոսանոց ջրածնի օքսիդ, այրվածքի դեմ աերոզոլ, ջերմիջեցնող միջոցներ:

²èúð»²Î²Ü



## ԳՐՔԵՐԻ ԽՆԱՄՔ

***Բավականին հարուստ գրադարան ունեմ: Խնամքով էլ վերաբերում եմ, թեպետ նկատում եմ, որ գրքերը սկսել են փչանալ, էջերը իրար են կպած եւ այլն: Գույե օգնե՞ք այդ հարցում:***

***Վ.Ստեփանյան***

***Թբիլիսի***

Դասականներից մեկն ասել է, որ «ձեռագրերը չեն այրվում», բայց գրքերը, այնուամենայնիվ, շատ արագ մաշվում են, եւ այդ պատճառով հետեւեք այս օգտակար խորհուրդներին.

Ընթերցվող գրքին պոլիէթիլենային շապիկ հագցրեք եւ ստվարաթղթե էջանիշ օգտագործեք:

Գրքերի փոշին պետք է մաքրել չոր փափուկ լաթով կամ փոշեկուլով: Սովորաբար դա արվում է տան ընդհանուր մաքրության ժամանակ: Խստիվ արգելվում է գրքերի շապիկները խոնավ կտորով սրբելը, թուղթը խոնավություն չի սիրում:

Նեխահոտը նույնպես վնասակար է գրքերի համար, հետեւաբար ժամանակ առ ժամանակ օդափոխեք ամուր փակված գրապահարաններն ու դարակները:

Այն գրքերը, որոնց կազմերը կեղտոտվել են, կարելի է մաքրել սպիրտի եւ ձվի դեղնուցի խառնուրդով: Այդ խառնուրդի մեջ թրջեք լաթը եւ մաքրեք կեղտոտ կազմը, իսկ հետո՝ փայլեցրեք բրդե կտորով:

Գրքերը կարելի է ընտրողաբար մաքրել: Դժբախտաբար, սիրելի գրքերի էջերին հաճախ են մատներից հետքեր առաջանում: Այդպիսի բծերը պրտեք օճառով, իսկ հետո մաքուր խոնավ լաթով եւ էջի երկու կողմերից ծծանի թուղթ դրեք: Հետքը կանցնի, երբ էջը չորանա:

Եթե երկար ժամանակ գրքերը չեն խնամվել եւ տեղ-տեղ բորբոս է առաջացել, ապա դրանից կարելի է ազատվել նաշադիրի սպիրտի կամ ֆորմալինի 2 տոկոսանոց լուծույթի օգնությամբ: Միայն թե այդպիսի մշակումից հետո էջերը պետք է ներծծող թղթի վրայից արդուկով չորացնել:

Այս խորհուրդները կօգնեն, որ դուք եւ ձեր ժառանգները ողջ կյանքում օգտվեք ձեր գրքերից:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԻՆՉՊԵՍ ՀԱՍՆԵԼ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ

***Յուրաքանչյուր մարդ ցանկանում է հասնել հաջողության, սակայն դա ոչ բոլորին է հաջողվում: Դա պայմանավորված է ոչ թե այդ մարդկանց մոտ տաղանդի ու կամքի ուժի բացակայությամբ, այլ՝ դրանց ոչ ճիշտ օգտագործմամբ: Շատ դեպքերում մարդիկ առաջնորդվում են ինտուիցիայով, առանց ձեռք բերված հաջողությունների եւ անհաջողությունների վերլուծության: Բավական բարդ ու միաժամանակ շատ կարեւոր է դառնալ հաջողակ մարդ, իսկ դրան հասնելու համար պետք է հստակ հասկանալ՝ ի՞նչ է անհրաժեշտ դրա համար:***

**Ի՞նչն է խանգարում հաջողության հասնելուն**

* Կասկած սեփական ունակությունների վրա եւ ինքնավստահության պակաս: Մարդկանց մեծամասնությունը նույնիսկ չեն ցանկանում փորձել փոխել իրենց կյանքը, իրականացնել իրենց երազանքները: Նրանք չեն հավատում, որ կարող են դա անել եւ արդարանում են, պնդելով, որ իրենք չունեն անհրաժեշտ տաղանդ, կապեր, գումար եւ այլն: Ոչինչ չանելու համար արդարանալ կարողանում են շատերը, բայց շատ քչերն են գիտակցում, որ գեղեցիկ արդարացումներ փնտրելու փոխարեն, կարելի է զբաղվել գործով:



* Անհաջողության հանդիպելուց հետո՝ հետագա փորձերի դադարեցում: Շատերը դադարեցնում են հաջողակ դառնալու փորձերը առաջին անհաջողությունից հետո, ոմանք դիմանում են եւս մի քանի անհաջողության: Ցանկացած դեպքում նրանք թողնում են հաջողության հասնելու ճանապարհը: Իսկ դա անել չի կարելի: Կարելի է ապրել՝ ինչպես մնացածները, բայց այդ տարբերակը մեզ համար չէ: Մնում է միայն փորձել կրկին ու կրկին, քանի դեռ չի հաջողվել հասնել նպատակին:

* Աջակցության բացակայություն: Հաճախ մտերիմները չեն կարողանում հասկանալ ձեր ցանկությունը հասնել հաջողության, նրանք փորձում են ծաղրել ձեզ, հաճախ փորձելով համոզել, որ ձեր բոլոր ջանքերը անիմաստ են: Սա շատ հզոր գործոն է: Պայքարել այդ գործոնի դեմ բարդ է՝ պետք է փորձել անտեսել այն:

* Սեփական ունակությունների եւ հնարավորությունների սխալ գնահատում: Անձը կարող է նաեւ հաջողության չհասնել, որովհետեւ զբաղվում է ոչ նրանով, ինչով պետք է զբաղվեր եւ շարժվում է սխալ ուղղությամբ: Օրինակ, եթե կա մարդկանց ղեկավարելու տաղանդ, ապա պետք է առաջին հնարավորության դեպքում բաժանել պարտականությունները, ոչ թե ամեն ինչ անել անձամբ:

Սրանք հաջողության հասնելու ճանապարհին հանդիպող հիմնական խոչընդոտներն են, իսկ այժմ նրա մասին, թե ինչպես կարելի է դառնալ հաջողակ:

**Ինչպե՞ս լինել հաջողակ**

* Լինել անկախ: Պետք է լինել ինքնուրույն, մտածել ձեր ապագայի մասին: Պետք է մտածել նաեւ այլ մարդկանց մասին, բայց առաջնահերթ կենտրոնացեք ձեր նպատակների վրա: Ի վերջո, սկզբում դուք եք ցանկանում դառնալ հաջողակ, այլ ոչ թե շրջապատին դարձնել այդպիսին: Սա չի նշանակում, որ պետք է վերածվել եսասերի, սակայն նրանք, ովքեր մտածում են միայն ուրիշների մասին, հիմնականում ի վիճակի չեն լինում հոգալ իրենց մասին եւ կարեկցանքը միայն արդարացնում է նրանց անհաջողությունները:

* Հավատալ սեփական ունակություններին: Պետք չէ վախենալ հանդուգն ծրագրերի մշակումից, որովհետեւ ձեզ թվում է, որ չեք կարողանալու իրագործել դրանք: Բայց նաեւ պետք չէ միանգամից ձգտել գրավել աշխարհը, այլապես փորձերը անիմաստ կլինեն:

(Շարունակելի)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՀՐԱԺԱՐՎԵԼՈՎ ԾԽԱԽՈՏԻՑ՝ ԿԵՐԿԱՐԱՁԳԵՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Բրիտանացի գիտնականները պարզել են, թե ինչպես են վնասակար սովորույթներն ազդում մարդու արտաքինի եւ կյանքի տեւողության վրա: Մարդը, որը ծխում է, ճիշտ չի սնվում, քիչ է շարժվում եւ շատ է գործածում ալկոհոլային խմիչքներ, իր տարիքից 12 տարով մեծ է երեւում: Վնասակար սովորույթները մեծացնում են նաեւ քաղցկեղից մահանալու հավանականությունը, մասնավորապես, ծխելը՝ 58 տոկոսով, քիչ շարժվելը՝ 2 անգամ, ալկոհոլի չարաշահումը՝ 25 տոկոսով: Բացի այդ, գիտնականները պարզել են, որ ծխախոտից հրաժարվելով, կանայք 9 ամսում նիհարում եւ երիտասարդանում են 13 տոկոսով:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ավելի լավ է ոտքով սարի լանջը ելնել, քան խոսքով հասնել նրա կատարը:

***Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ***
***(1903-1978)***
***Հայ ականավոր կոմպոզիտոր***

Ուսման արմատը դառն է, գագաթը՝ քաղցր:

***ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ***
***(1705-1791)***
***Վրաց բանաստեղծ***

Քո հիվանդությունը երկու մարդուց չպետք է թաքցնել՝ բժշկից եւ ընկերոջից:

***ԱՐԻՍՏՈՖԱՆԻ***
***(մ.թ.ա.444-մ.թ.ա.387)***
***Հին հունական կատակերգակ***

Ընտանեկան երջանկության գրավականը բարության, անկեղծության, գթասրտության մեջ է:

***ԷՄԻԼ ԶՈԼԱ***
***(1840-1902)***
***Ֆրանսիացի գրող***

Բարոյապես լավ մարդուն է ավելի սազական դրսեւորել իր ազնվությունը:

***ԱՐԻՍՏՈՏԵԼ***
***(մ.թ.ա.384-մ.թ.ա.322)***
***Հռոմեացի փիլիսոփա***

Իսկական տղամարդ է նա, ում կինը պարբերաբար ֆիզիոլոգիական արձակուրդում է:

***Ա.ՄԻՆԱՍՅԱՆ***
***Վրաստանի» ընթերցող***

²Üº Î¸àÎÜºð

** - Ինչո՞ւ ես այդքան տխուր:*

*- Երեկ մտա մետրո, իսկ այնտեղ մի հրաշք աղջիկ էր նստած: Երիտասարդ, ոտքերը մինչեւ ականջները, գեղեցկուհի... Ես չդիմացա եւ նրան աչքով արեցի...*

*- Իսկ նա՞:*

*- Կանգնեց եւ տեղն ինձ զիջեց:*

** - Ինչո՞ւ ամուսնացար այդ հիմար տղամարդու հետ:*

*- Հենց այդ պատճառով:*

** - Իսկ որտե՞ղ է ամուսինդ:*

*- Շան հետ գնաց զբոսնելու:*

*- Բայց շունն այստեղ է:*

*- Մոռացել է:*

** - Դե', ինչ, քեզ հաջողվե՞ց դնել ատամի իմպլանտներ:*

*- Ո'չ: Բժիշկն ինձ մոտ հայտնաբերեց լուրջ հակացուցում:*

*- Ինչպիսի՞:*

*- Անհրաժեշտ գումարի բացակայություն:*

** - Ինչո՞ւ է լռում գեներալը:*

*- Մտածում է... Ընդհանրապես բանակում այսպես է՝ եթե գեներալը լռում է, ապա կա'մ մտածում է, կա'մ էլ դեռեւս հայրենասեր է:*

** Հանդիպում են երկու ընկեր:*

*- Ողջո'ւյն: Ինչու՞ ես այդքան տխուր:*

*- Ես որդի եմ ունեցել:*

*- Բայց դա շատ լավ է, դու պիտի ուրախանաս, ոչ թե տխրես:*

*- Ես այդպես էլ անում էի, քանի դեռ կինս այդ մասին չէր իմացել:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## «ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԻՆ» 5-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԴԻԱ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

2015 թվականին Հայաստանը, աշխարհասփյուռ հայությունը միջազգային հանրության հետ հիշում եւ ոգեկոչում են մեկ դար առաջ Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությունը:

Ստեղծվեց պետական հանձնաժողովը, որին անդամակցում են հայկական խոշորագույն բոլոր կառույցների ղեկավարները: Հանձնաժողովի կողմից ընդունվեց Համահայկական հռչակագիրը, որում ամրագրված է հայ ժողովրդի հավաքական կամքը եւ որում վերահաստատվում է Հայաստանի եւ հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման եւ պատմական արդարության հաստատման համար: Այդ տեսանկյունից Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները սոսկ համահայկական բնույթ չեն կրում. դրանք համամարդկային արժեքների դեմ ցանկացած ոտնձգության կանխման յուրատեսակ կոչ են: Այդ իսկ պատճառով ես հրավերներ եմ ուղարկել աշխարհի տարբեր պետությունների ղեկավարների եւ բարձրաստիճան պաշտոնյաների՝ ապրիլի 24-ին գալու Հայաստան եւ այդպիսով ցեղասպանության հանցագործության անթույլատրելիության մասին հզոր ուղերձ հղելու աշխարհին:

Ակնհայտ է մի բան. այսօրվա աշխարհի կայունության ու բնականոն զարգացման գրավականը խաղաղ գոյակցությունն ու հանդուրժողականությունն են: Հենց այս սկզբունքով ենք առաջնորդվում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործընթացում՝ թույլ չտալով Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունների եւ սադրիչ գործողությունների պատճառով խաղաղ բանակցությունների ձախողումը:

Թեեւ ցեղասպանության ճանաչումն ու ԼՂ հիմնահարցի հանգուցալուծումը կենսական խնդիրներ են մեզ համար, մեր օրակարգը, բնականաբար, շատ ավելի լայն է:




Կարեւորում ենք նաեւ սահմանադրական բարեփոխումները, որոնք մենք նախաձեռնել ենք Հայաստանում: Դրանք նպատակ ունեն կատարելագործելու իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների եւ ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը, ապահովելու իշխանությունների լիարժեք հավասարակշռումը, բարձրացնելու կառավարման արդյունավետությունը: Մենք քաջ գիտակցում ենք, որ ժողովրդավար հասարակություն եւ երկիր կառուցելը շարունակական գործընթաց է, եւ պատրաստակամ ենք հետեւողականորեն ներդնել մեր ջանքերն այդ նպատակին»,-նշեց Հայաստանի նախագահը:

## ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ. «ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԼՌԵԼՈՒ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ Է ՊԱՅՔԱՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ»



*Համայն հայությունը չի լռելու եւ շարունակելու է իր պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար:*

Այս մասին հայտարարեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Երեւանում անցկացվող «Արարատի ստորոտին» 5-րդ միջազգային մեդիախորհրդաժողովի ժամանակ: Նախարարը ներկայացրեց հայկական սփյուռքի պատմությունը, այն փուլերը, որոնց արդյունքում հայերը հաստատվեցին իրենց հայրենիքի սահմաններից դուրս: «Այսօր հաշվարկվում են 7 միլիոնից ավելի հայեր, ովքեր ապրում են Հայաստանից դուրս: Սփյուռքում գործում են 30 հազարից ավելի հայկական կազմակերպություններ, 500-ից ավելի դպրոցներ, 3 կուսակցություններ, որոնք մասնաճյուղեր ունեն 30-ից ավելի երկրներում, եկեղեցական հզոր ցանց, մշակութային ու սպորտային կենտրոններ»,- ասաց Հրանուշ Հակոբյանը:

Անդրադարձ կատարելով Թուրքիայի տարածքում ապրող հայերին՝ նախարարը նշեց, որ մոտավոր հաշվարկներով այնտեղ ապրում է 3 միլիոն հայ, որոնցից շատերը ստիպված են թաքցնել իրենց ինքնությունը:

Նախարարը մեդիաֆորումի մասնակիցներին կոչ արեց ուշադրություն դարձնել ու անդրադառնալ այնպիսի հարցերի, որոնք Հայոց ցեղասպանության հետեւանքն են:

Իր ելույթը նախարարն ավարտեց այն մտքով, որ հայությունը պայքարելու է, որպեսզի աշխարհում այլեւս երբեք չկրկնվեն ցեղասպանությունները:

## ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ



*Աշխատանքային այցով Բելգիայում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցեց եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) գագաթաժողովին:*

Այցի շրջանակներում՝ Հայաստանի նախագահը հանդիպեց եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի հետ: Զրուցակիցները քննարկեցին Հայաստան-ԵՄ կառուցողական երկխոսությանն ու հարաբերությունների զարգացման հեռանկարին վերաբերող հարցեր:

Հանդիպմանն անդրադարձ է եղել Հայաստանում իրականացվող բարեփոխումներին, որոնք, կողմերի համոզմամբ, կարեւոր տեղ են զբաղեցնում Եվրամիության հետ Հայաստանի հարաբերություններում:

Սերժ Սարգսյանը եւ Դոնալդ Տուսկն անդրադարձել են նաեւ 2014թ. տարեվերջից ԵՄ-ի հետ քննարկվող Հայաստան-ԵՄ հարաբերությունները կարգավորող նոր իրավական շրջանակը ձեւավորելու հարցին եւ Արեւելյան գործընկերության Ռիգայի գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքներին: Զրուցակիցներն անդրադարձել են նաեւ Հարավային Կովկասի տարածաշրջանի խնդիրներին ու մարտահրավերներին:

Սերժ Սարգսյանը կարճատեւ հանդիպում ունեցավ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ: Զրուցակիցները քննարկեցին հայ-գերմանական երկկողմ եւ բազմակողմ համագործակցությանն ու Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների զարգացմանը վերաբերող հարցեր:

## ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ



*Մարտի 19-ին, ժամը 08:30-ի սահմաններում, Ադրբեջանի հատուկ նշանակության ջոկատի ուժեղացված խումբը հարձակում է ձեռնարկել հյուսիսային (Գյուլիստանի) ուղղությամբ տեղակայված դիրքերի վրա: Հակառակորդին դիմագրավելու ժամանակ արիաբար զոհվել են ՊԲ զինծառայողներ Հակոբ Խաչատրյանը (1996թ.), Էդուարդ Հայրապետյանը (1995թ.) եւ Արշակ Հարությունյանը (1995թ.), Պաշտպանության բանակի եւս 4 զինծառայողներ վիրավորվել են:*

Շուրջ երկու ժամ տեւած մարտական գործողության արդյունքում՝ նախ դիրքապահ անձնակազմը հետ է շպրտել նախահարձակ հակառակորդին, ապա օգնության հասած ուժերի հետ միասին հետապնդելով վերջինիս, ոչնչացրել իր դիրքերի մատույցներում:

Ինչպես նշեց Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, հայկական զինուժը պատրաստ է իրավիճակի ցանկացած զարգացման, սակայն լայնամասշտաբ գործողությունների որեւէ վտանգ չեմ տեսնում:

«Իրավիճակը սահմաններում եւ շփման գծում լիովին վերահսկելի է, հայկական ստորաբաժանումները վստահորեն իրականացնում են իրենց առջեւ դրված խնդիրները»,- հայտարարեց Սեյրան Օհանյանը:

## ՄԹՆՈԼՈՐՏԸ ԶՈՆԴԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝ ՄԻԱԿԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

*Հայաստանի տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի պետական ծառայությունը, «Կամավոր համագործակցություն» ծրագրի շրջանակներում, Համաշխարհային օդերեւութաբանական կազմակերպությունից (ՀՕԿ) ստացել է եւս 300 ռադիոզոնդ:*

Վերջին տարիներին Հարավային Կովկասի տարածաշրջանում մթնոլորտի զոնդարկում կատարվում է միայն Հայաստանում, Երեւանի աերոլոգիական կայանի կողմից, օրական մեկ անգամ, Գրինվիչի ժամանակով ժամը՝ 00:00-ին: Հատկանշական է այն փաստը, որ կայանն ընդգրկված է Համաշխարհային Օդերեւութաբանական Կազմակերպության գլոբալ կլիմայական դիտարկումների համակարգի (GCOS) մթնոլորտի վերին շերտերի ուսումնասիրության գլոբալ ցանցում (GUAN): Երեւանի աերոլոգիական կայանը ՀՕԿ-ի Եվրոպայի տարածաշրջանի կլիմայի մոնիտորինգի ենթատարածաշրջանային Կենտրոն է եւ իրականացնում է ամսական ու սեզոնային կլիմայի մշտադիտարկում Հարավային Կովկասի տարածաշրջանի համար:

### 100 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻՆ

***Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան Թուրքիայի այլ վայրերում մինչեւ 1915 թվականը (ներառյալ) ծնված եւ Հայոց ցեղասպանությունը վերապրած հայերին տրվող ամսական դրամական օգնության չափը քսանհինգ հազար դրամի փոխարեն Հայաստանի կառավարությունը սահմանեց հարյուր հազար դրամ: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանի խոսքերով, որոշումն ուժի մեջ կմտնի 2015 թվականի ապրիլի մեկից:***

***2015-ի հունվարի 1-ի դրությամբ՝ Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան Թուրքիայի այլ վայրերում մինչեւ 1915 թվականը (ներառյալ) ծնված եւ Հայոց ցեղասպանությունը վերապրած 33 անչափ տրվում է քսանհինգ հազար դրամ:***

### ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԸ ՄԱՆԴԱՏԻՑ ՉԻ ԶՐԿՎԻ

***Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը դադարեցրել է Գագիկ Ծառուկյանին մանդատից զրկելու գործընթացը: Գագիկ Ծառուկյանը իր գործունեությունը շարունակելու է որպես անկախ պատգամավոր: Այս մասին հայտարարեց ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը: «Արդեն ընդհատել եմ Գագիկ Ծառուկյանին մանդատից զրկելու համար ուսումնասիրությունները եւ որոշումն այն է, որ Գագիկ Ծառուկյանին մանդատից զրկելու խնդիր չկա: Ես օրեր առաջ լրացուցիչ մեկնաբանություններ եմ ստացել Ծառուկյանից»,- ասաց Սահակյանը:***

***Գալուստ Սահակյանը նշեց, որ անկախ նրանից, որ Գագիկ Ծառուկյանը այլեւս ԲՀԿ նախագահ չէ, ամեն դեպքում նա շարունակում է իր աշխատանքը որպես պատգամավոր:***

### ՀԱՍՏԱՏՎԵՑ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

***Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց գործարար միջավայրի բարելավման 2015 թվականի միջոցառումների ծրագրին:***

***Ծրագրի շրջանակում կպարզվեն բիզնես սկսելու եւ զարգացնելու համար պահանջվող վարչարարական ընթացակարգերը, ծրագիրը կնպաստի փոքր եւ միջին ձեռնարկությունների արագորեն աճի եւ արտաքին առեւտրի խթանմանը, հարկային եւ մաքսային հավասարակշռված քաղաքականության իրականացմանը:***

***Ինչպես նշեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանը՝ «Իրականացվող բարեփոխումները պետք է զգալիորեն բարձրացնեն Հայաստանի գլոբալ մրցունակությունը եւ արդյունքում բարելավեն Հայաստանի դիրքը Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման մեջ: Համաշխարհային բանկի եւ Միջազգային ֆինանսական կորպորացիայի վարկանիշային զեկույցի համաձայն՝ Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում է 45-րդ տեղը»:***

### ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

***Գյումրիում հունվարի 12-ին տեղի ունեցած Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության գործով ստացվել է նշանակված դատաձգաբանական փորձաքննության եզրակացությունը:***

***«Հաշվի առնելով նշված գործի նկատմամբ ձեւավորված հասարակական պահանջը՝ տեղեկացնում ենք, որ, փորձագետների գնահատմամբ, դեպքի վայրում հայտնաբերված եւ փորձաքննության ներկայացված պարկուճները, գնդակները կրակվել են «AKM-74» տեսակի ինքնաձիգից, որը ամրակցված է եղել գործով մեղադրյալ Վ.Պերմյակովին եւ հայտնաբերվել է դեպքի վայրում»,- նշված է Քննչական կոմիտեի հաղորդագրության մեջ:***

***Նախաքննությունը շարունակվում է, որի ընթացքի մասին կշարունակվի պարբերաբար տեղեկության տրամադրումը:***

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՄԱՐՏ



*22.03.2015. Գալստյան կիրակի*

Մեծ Պահքի վեցերորդ կիրակին կոչվում է Գալստյան: Այս կիրակին Հիսուս Քրիստոսի Առաջին Գալստյան՝ մարդեղության հիշեցումն է: Հաստատվեց այն ճշմարտությունը, որ Փրկչի Գալստյամբ հնարավորություն ընձեռվեց մարդկությանը փրկության ուղով առաջնորդվել: Այս կիրակին միեւնույն ժամանակ Երկրորդ Գալստյան խորհուրդն ունի: Ավետարաններում եւ առաքյալների թղթերում բազում հատվածներ եւ անդրադարձներ կան Երկրորդ Գալստյանը նվիրված: Տերը զգուշացնում է Երկրորդ Գալստյան եւ նրա նախանշանների մասին. «Զգույշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի, որովհետեւ շատերը կգան իմ անունով ու կասեն, թե՝ ես եմ Քրիստոսը. եւ շատերին կմոլորեցնեն: Լսելու եք պատերազմների ձայներ եւ պատերազմների լուրեր...:

Ազգ ազգի դեմ պիտի ելնի, եւ թագավորությունն՝ թագավորության դեմ, եւ պիտի լինեն սով, համաճարակ ու տեղ-տեղ երկրաշարժեր: Սակայն այս ամենը սկիզբն է երկանց: ... Եվ բազում սուտ մարգարեներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն: Եվ անօրինության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի: Բայց ով մինչեւ վերջ համբերեց, նա պիտի փրկվի» (Մատթ. 24, 4-13): Այս է Գալստյան կիրակիի խորհուրդը՝ կոչ համբերության, բարեպաշտության, պարկեշտության, որովհետեւ հոգու բյուրեղացմամբ եւ ճշմարիտ հավատով մարդ կարող է սպասել Տիրոջ հրաշափառ Գալստյանը: Քրիստոնեական բոլոր եկեղեցիներն էլ ունեն Գալստյան անունով կիրակի:

## ՖՈՒՏԲՈԼ

### ՀԵՐԹԱԿԱՆ ՆԱՀԱՆՋ ՖԻՖԱ-Ի ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

ՖԻՖԱ-ն հրապարակել է մարտի ամսվա դասակարգման նոր աղյուսակը:

Վրաստանի հավաքականը նախորդ վարկանիշի համեմատությամբ նահանջել է 15 հորիզոնականով եւ հանգրվանել 110-րդ տեղում: Նահանջել է նաեւ Հայաստանի ազգային ընտրանին: Իր դիրքերը զիջելով 5 հորիզոնականով, այն նույն վարկանիշում զբաղեցնում է 79-րդ հորիզոնականը:

Աղյուսակը գլխավորում է աշխարհի չեմպիոն Գերմանիայի հավաքականը, երկրորդ տեղում է Արգենտինան, երրորդը Կոլումբիան է:

Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցնում Նիդերլանդների, Բելգիայի, Բրազիլիայի, Ուրուգվայի, Իսպանիայի, Ֆրանսիայի եւ Շվեդիայի հավաքականները:

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

### ՎՐԱՑԱԿԱՆ «ԱՍՈՄԹԱՎՐՈՒԼԻՆ», «ՆՈՒՍԽՈՒՐԻՆ» ԵՎ ԱՐԴԻ «ՄԽԵԴՐՈՒԼԻՆ» ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՑՈՒՑԱԿՈՒՄ

*Վրացական գրչության երեք տեսակները՝ «Ասոմթավրուլին», «Նուսխուրին» եւ արդի «Մխեդրուլին» հավակնում են ներգրավվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ համամարդկային ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակում: Այդ մասին հայտարարել է Վրաստանի մշակույթի նախարարության մշակութային ժառանգության պահպանման գործակալության տնօրեն Նիկա Անթիձեն:*

Գործակալության 2015 թվականի ռազմավարության եւ ծրագրերի շնորհանդեսին նա հայտարարեց, որ վրացական գրչության բոլոր երեք տեսակներին արդեն տրվել է Վրաստանի մշակութային ոչ նյութական ժառանգության հուշարձանի կարգավիճակ եւ մոտ ժամանակներս դրանց կտրվի ազգային կատեգորիայի հուշարձանի կարգավիճակ: «Գործակալությունը ծրագրում է վրացական գրչության բոլոր երեք տեսակները ներկայացնել՝ որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի համամարդկային ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակի թեկնածուների»,- նշեց Անթիձեն: Նա նշեց, որ անվանական կարգման շուրջ աշխատանքները շարունակվում են: Հայտարարվել է նաեւ վրացական գրչության վերաբերյալ կարճամետրաժ վավերագրական կինոնկարի նկարահանման մրցույթը:

Հիշեցնենք, որ վրացական այբուբենը համարվում է աշխարհի հնագույններից մեկը: Վրաց գրչությունը անցել է զարգացման երեք փուլ՝ մեր թվարկությունից առաջ 3-րդ դարում Քարթլիի թագավոր Փառնավազի օրոք ստեղծվել էր վրացական առաջին այբուբենը՝ «ասոմթավրուլին, 9-րդ դարում վրաց լեզվում սկսեցին




կիրառել նոր տեսակը՝ «նուսխուրին», իսկ 11-րդ դարում կայացավ վրաց գրչության հերթական, այս անգամ վերջնական փոփոխությունը, ներդրվեց «մխեդրուլին»:

Բոլոր գրչությունների շարքում «մխեդրուլին» ամենակատարելագործվածն էր, այն իր վերջնական տեսքը ձեռք բերեց 15-րդ դարում:

Ներկայիս վրացական այբուբենը բաղկացած է 33 տառից, որից 5-ը ձայնավոր են, իսկ 28-ը՝ բաղաձայն:

## ԵՎՐԱՏԵՍԻԼ-2015

### ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ



*Մարտի 16-ին, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում կայացավ «Եվրատեսիլ-2015» երգի միջազգային 60-րդ հոբելյանական մրցույթի մասնակից պետությունների պատվիրակությունների ղեկավարների պաշտոնական հանդիպումը, որին ներկա են եղել մասնակից բոլոր 40 երկրների ներկայացուցիչներ՝ այդ թվում Վրաստանը եւ Հայաստանը:*




Մրցույթն այս տարի կկայանա Վիեննայում մայիսի 19-ին, 21-ին եւ 23-ին՝ «Կառուցելով կամուրջներ» խորագրի ներքո:

Մրցույթին Վրաստանը ներկայացնելու է Նինո Սուբլատին, որը ճանաչում է ստացել «Ռուսթավի-2» հեռուստաընկերության «Վրաստանի աստղ» երաժշտական նախագծում հաղթելու շնորհիվ:

«Եվրատեսիլ»-ին մասնակցելու հավակնորդների թվում էին Միշա Սուլուխիան, «Նյուտոն» խումբը, Էթեր Բերիաշվիլին եւ Էդվարդ Մեյսոնը, բայց նախապատվությունը տրվել է Նինո Սուբլատիին:

Վրաստանի Հանրային հեռարձակողի մարկետինգային ծառայության ղեկավար Թինաթին Բերձենիշվիլու խոսքով, տնօրինությունն ուշադրության է առել հանդիսատեսի ցանկությունը եւ նրանց թույլ է տվել միջազգային ժյուրիի հետ համատեղ որոշել ընտրական փուլի հաղթողին: Երկու շաբաթվա ընթացքում Վրաստանի Հանրային հեռարձակողի եթերում ցուցադրում էին մասնակիցների երգերի տեսահոլովակները: Նինո Սուբլատին կատարել է «Warrior» երգը:

Երգի փառատոնում Հայաստանը ներկայացնելու է «Genealogy» խումբը, որի ամբողջական կազմը հայտնի դարձավ վերջերս, երբ անցկացվեց «Don't deny» երգի պրեմիերան: Խմբի վեցերորդ մասնակիցը սիրված ու ճանաչված երգչուհի, Հայաստանի վաստակավոր արտիստ Ինգա Արշակյանն է: Հենց նա այս տարի եվրատեսիլյան բեմում կմիավորի երկրագնդի 5 աշխարհամասերը խորհրդանշող խմբի անդամներին՝ Եսայի Ալթունյան, Թամար Կապրելյան, Վահե Թիլբյան, Ստեֆանի Թոփալյան եւ Մերի-Ջին Օ'Դոհերթի Վասմաթզյան: Միմյանցից տարբեր ոճերով 6 երգիչներին միավորում են երաժշտությունն ու արմատները, սերն ու համերաշխությունը:

Մրցույթին այս տարի Հայաստանը կներկայանա «Don't deny» երգով, որը համամարդկային արժեքների մասին է, իսկ ասելիքը մեկն է. «Երջանկությունը ծնվում է, երբ մարդ հաշտ է ինքն իր հետ, իր ընտանիքում, սիրային եւ այլ հարաբերություններում: Սերունդները փոխվում են, բայց ծագումնաբանությունը՝ ոչ, ուստի սիրո ու համերաշխության արժեքները մնայուն են»:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Շուտահաս: 9.Միավորների կիսում սպորտում: 10.Կտրված ծառի մնացորդ: 11.Լոլիկ: 13.Քաղաք Շիդա Քարթլիի երկրամասում: 16.Արեւի աստվածը հին Եգիպտոսում (մ.թ.ա. մոտ 3000 տարի): 17.Բարձրագույն ուսումնական հաստատություն: 19.Ֆրանսիացի գրող ... Ռոլան: 22.Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Նիկոլ ...: 24.Ֆիլմը՝ անգլերեն: 25.Քաղաք Եմենում: 27.Քաղաք Ուգանդայում: 29.Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիների սրբուհի: 32.Վալախիայի իշխան Վլադ Ցեպեշ (Ռումինիա): 33.Ռուսական «հաղթական» ավտոմեքենա: 35.Զինանշան: 37.Սեզ, սիգապանծ: 39.Հրազդան գետը՝ հնում: 40.Անառիկ: 43.Կերակուր եփելու կավե մեծ աման: 44.Պետություն Աֆրիկայում: 47.Արեգակ: 49.Արքունի ատյան: 50.«Օդային» նախածանց: 53.Ծնոտ (ժող.): 54.Պետություն Ամերիկայում (հապ.): 55.Դաբաղող նյութ: 57.Ֆրանսիայի մարշալ, Նապոլեոն I Բոնապարտի զինակիցներից՝ Միշել ...: 58.Եղեգնուտ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Նոյի թոռներից: 2.Քիմիական տարր: 3.Հայկական տպագրության սկզբնավորող, հիմնադիր ... Մեղապարտ: 4.Փոթորիկ: 5.Կոկորդի արտադրություն: 6.Ուսյալ, կրթված: 8.Հոսող: 12.Փաղիժ, տարանտուլ: 14.Ցրված բեկորների կույտ: 15.Դրախտ: 18.Դիտմամբ: 19.Մարզական արտադրանքի ֆիրմա: 20.Նահանգ ԱՄՆ-ում: 21.Քարթլիի թագուհի (մոտ 285-335թթ.): 23.Հայ բանաստեղծ ... Սենալ: 26.Իտալացի երգահան Ջուզեպպե Վերդիի օպերա՝ չորս գործողությամբ: 28.Ուշի-...: 29.Ալյուրը զտելու հարմարանք: 30.Փափուկ կոնֆետ: 31.Ըստ հերթականության: 34.Գերմանիայի մայրաքաղաքը: 36.Կենդանու ազդր, զիստ: 38.Բարձունք, լեռ: 41.Ազգ ՌԴ-ում: 42.Պարտված մարզիկի կողմից հաջորդ մրցամարտում նույն մարզիկին հաղթելը: 45.Անվանակից: 46.Ռուսաստանի «Ահեղ» ցարը: 48.Թաիլանդի հին անունը: 51.Կեղտ, զիբիլ: 52.Սապատավոր կենդանի: 56.Բացականչություն:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Անզգա: 6.Ուստա: 10.Ըմբիշ: 11.Անգինա: 13.Լիրա: 14.Երջանիկ: 18.Ողբամ: 21.Ողջի: 23.Մաստիկա: 24.Առանց: 27.Ակամա: 29.Բարբի: 33.Անհաշտ: 34.Մեդուզա: 35.Մղոն: 36.Այցելու: 37.Կիեւ: 39.ԱՄՆ: 41.Ճան: 42.Իսանի: 43.Առկա: 45.Չի: 46.Չակ: 48.Որ: 49.Վահե: 51.Ծալկա: 53.Թարխուն: 54.Նասիմ: 56.Ռիտա:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Նեգր: 3.Գոնե: 4.Էմմա: 7.Սկիզբ: 8.Արա: 9.Բար: 12.Արամե: 15.Նոտար: 16.Կոկաին: 17.Ֆիլմ: 19.Ղառ: 20.Այն: 22.Ղեկ: 25.Ահաբեկիչ: 26.Ցիտրուս: 27.Աղմուկ: 28.Անդրե: 30.Անխնա: 31.Բալանս: 32.Կադին: 38.Վճար: 40.Մի: 43.Անոթի: 44.Կոբրա: 45.Չալ: 47.Կշեռք: 49.Վան: 50.Եթիմ: 51.Ծուռ: 52.Անի: 55.Ահ:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445